# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

Դատական դեպարտամենտի կարիքների համար տնտեսող լամպերի
ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/13» ծածկագրով
գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«02» մայիսի 2023թ.
Ժամը՝ 10:30

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Արթուր Ասատրյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

*հանձնաժողովի անդամներ՝*

**Տիգրան Զեյնալյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

**Անդրանիկ Աբգարյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

**Վարդան Կարապետյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ – շինարար

**Արմինե Մարգարյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ - տնտեսագետ

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Արուս Խաչատրյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ

**1. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, ինչպես նաև eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի մուտքագրման (լրացման) մասին.**

**1.1.** Լայթինգ Գրուպ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա է հրավերով պահանջվող էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված N 1), ինչպես նաև Համակարգում մուտքագրված (լրացված) են առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը:

Լայթինգ Գրուպ ՍՊԸ-ի հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունում նշված է, որ Լայթինգ Գրուպ ՍՊԸ-ն հանդիսանում է ՀՀ ռեզիդենտ: Հայտում առկա է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ Հավելված N 1.2-ը, որը գնահատող հանձնաժողովի կողմից չի քննարկվել, քանի որ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/13» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 4.3-րդ կետի 1)-ին ենթակետի «ե)» պարբերության պահանջների համաձայն՝ ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը ներկայացնում է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ համաձայն հավելված 1.3-ի: Լայթինգ Գրուպ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է հրավերով պահանջվող Հավելված N 1.3-ը:

**1.2.** ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա է հրավերով պահանջվող էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1), հայտում բացակայում է հրավերով պահանջվող իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ Հավելված N 1.3-ը, ինչպես նաև Համակարգում մուտքագրված (լրացված) չէ 2-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

**1.3.** Ասմիդա ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, ինչպես նաև Համակարգում մուտքագրված (լրացված) են առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը:

**1.4.** Գոռ Մատինյան Յուրիկի Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտում առկա է հրավերով պահանջվող էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված N 1), ինչպես նաև Համակարգում մուտքագրված (լրացված) է առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

Հայտում առկա են նաև իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրեր՝ Հավելված N 1.2 և Հավելված N 1.3, որոնք գնահատող հանձնաժողովի կողմից չեն քննարկվել, քանի որ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/13» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 4.3-րդ կետի 1)-ին ենթակետի «ե)» պարբերության պահանջների համաձայն, եթե մասնակիցը անհատ ձեռնարկատեր է, իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր չի ներկայացվում:

**1.5.** ՌՈԿ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա է հրավերով պահանջվող էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված N 1), ինչպես նաև Համակարգում մուտքագրված (լրացված) են առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը:

ՌՈԿ ՍՊԸ-ի հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունում նշված է, որ ՌՈԿ ՍՊԸ-ն հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ: Հայտում առկա է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ Հավելված 1.2-ը, որը գնահատող հանձնաժողովի կողմից չի քննարկվել, քանի որ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/13» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 4.3-րդ կետի 1)-ին ենթակետի «ե)» պարբերության պահանջների համաձայն, ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը ներկայացնում է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ համաձայն հավելված 1.3-ի: ՌՈԿ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է հրավերով պահանջվող Հավելված N 1.3-ը:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**2. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերի /հայտերում առկա փաստաթղթերի, ինչպես նաև Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի/՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.**

**2.1. Լայթինգ Գրուպ ՍՊԸ**

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված N 1) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան (դիմում հայտարարության 2)-րդ կետի 3-րդ պարբերությամբ նախատեսված աղյուսակում նշված տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովի կողմից չի քննարկվել, քանի որ հրավերով հիշյալ աղյուսակի լրացման պահանջ սահմանված չէ),
- 7-րդ, 10-րդ, 11-րդ չափաբաժինների մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին, մասնավորապես՝ նկարագրերում բացակայում են հրավերով նախատեսված «Ապրանքների տեղափոխումն ու բեռնաթափումը Գնորդի պահեստ իրականացնում է Վաճառողը՝ իր միջոցների հաշվին:» և «Ապրանքները պետք է լինեն չօգտագործված և փաթեթավորված, տեխնիկական բնութագրում նշված պարամետրերի մակնշմամբ:» պայմանները:

**2.2. ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ ՍՊԸ**

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝

- Հավելված 1-ին վերաբերող տեղեկատվության մեջ, ինչպես նաև դիմում-հայտարարության առաջին նախադասության մեջ սխալ է նշված գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/13» ծածկագրի փոխարեն նշված է «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-23/84» ծածկագիրը,
- դիմում-հայտարարության առաջին նախադասությունում սխալ է նշված պատվիրատուի անվանումը՝ «Դատական դեպարտամենտ»-ի փոխարեն նշված է «Երևանի քաղաքապետարան», ինչպես

նաև Համակարգում նշված տեղեկատվության համաձայն ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ ՍՊԸ-ն մասնակցել է ընթացակարգի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ չափաբաժիններին, այն դեպքում, երբ հիշյալ նախադասության մեջ նշված է հետևյալ չափաբաժինը՝ «1»,

- դիմում-հայտարարության երրորդ նախադասությունում նշված չէ մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն, լրացված չէ մասնակցի ռուսերեն լեզվով անվանումը և կազմակերպաիրավական տեսակը (լրացված է մասնակցի հայերեն անվանումը և կազմակերպաիրավական տեսակը),
- դիմում-հայտարարության 1)-ին կետում ներառված չէ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/13» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին մասնակցին փոխկապակցված անձանց տվյալների համապատասխանության մասին հավաստումը,
- դիմում-հայտարարությունը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

**2.3. Ասմիդա ՍՊԸ**

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված N 1) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան (դիմում հայտարարության 2)-րդ կետի 3-րդ պարբերությամբ նախատեսված աղյուսակում նշված տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովի կողմից չի քննարկվել, քանի որ հրավերով հիշյալ աղյուսակի լրացման պահանջ սահմանված չէ) և գնահատվում է բավարար,
- ներկայացված հայտում առկա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ Հավելված N 1.3-ը կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում է բավարար,
- 1-ին, 5-րդ չափաբաժինների մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին և գնահատվում են բավարար:

**2.4. Գոռ Մատինյան Յուրիկի Ա/Ձ**

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված N 1) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝

- դիմում հայտարարության երրորդ նախադասությունում գործունեության հասցեն լրացված է ոչ ամբողջական, ինչպես նաև նշված չէ մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,
- դիմում հայտարարության 1)-ին կետում ներառված չէ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/13» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին մասնակցին փոխկապակցված անձանց տվյալների համապատասխանության մասին հավաստումը,
- 3-րդ չափաբաժնի մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը համապատասխանում է հրավերով սահմանված պայմաններին:

Դիմում հայտարարության 2)-րդ կետի 3-րդ պարբերությամբ նախատեսված աղյուսակում նշված տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովի կողմից չի քննարկվել, քանի որ հրավերով հիշյալ աղյուսակի լրացման պահանջ սահմանված չէ:

**2.5. ՌՈԿ ՍՊԸ**

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված N 1) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան,
- 4-րդ, 6-րդ, 8-րդ, 9-րդ չափաբաժինների մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**Հանձնաժողովը որոշեց.**

- նիստը կասեցնել և հաջորդ նիստը հրավիրել 2023թ. մայիսի 04-ին՝ ժամը 10:00-ին, Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնի վարչական շենքում (հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1):

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**Հանձնաժողովի քարտուղարին.**

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/13» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8.11-րդ կետի պահանջներով՝ **Լայթինգ Գրուպ ՍՊԸ-ի, ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ ՍՊԸ-ի, Գոռ Մատինյան Յուրիկի Ա/Ձ-ի, ՌՈԿ ՍՊԸ-ի** հայտերում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով՝ Համակարգի միջոցով ծանուցել հիշյալ մասնակիցներին՝ առաջարկելով մինչև սույն թվականի **մայիսի 03-ը ներառյալ** Համակարգի միջոցով շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի
Նախագահ՝ _____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝

_____ Տիգրան Զեյնալյան

_____ Անդրանիկ Աբգարյան

_____ Վարդան Կարապետյան

_____ Արմինե Մարգարյան

Քարտուղար՝

_____ Արուս Խաչատրյան